

ԲԱԳՐԱՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

«ՂԵՐԲԱՅԸ» ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆՈՒՄ

Առաջին հայացքից կարող է զարմանալի թվալ, բայց «ղերբայ» տերմինը հայերենագիտության մեջ, իրոք, մինչև օրս հստակ, ընդհանուր ճանաչում գտած սահմանում չունի: Ամենահատկանշական բնութագրումը վերջինիս համար դիմագուրկ լինելն է: Սակայն անմիջապես ավելացվում է, որ հայերենում այն համատեղում է նաև անվանական կարգեր:

Իրոք, ակներև հակասության հետ զործ ունենք. ի՞նչ է նշանակում բայի դեր կատարող որևէ բառ, որը միևնույն ժամանակ նաև անուն կարող է լինել:

Նախ՝ այսպես կոչված «կախյալ ղերբայների» կամ «ծևաբայերի» մասին:

Իրապես ոչ մի քննադատության չի դիմանում այն համակարգը, որն արհեստական հիմունքով է ստորաբաժանում լեզվում գոյություն չունեցող բառածևերը: Ինչպես ժամանակին նկատել է Սերգեյ Աբրահամյանը¹, ժամանակակից հայոց լեզվում չկա կառողւմ, կառողագել առանց օժանդակ բայի: Կառողալու կա, բայց՝ ոչ որպես դիմային ձև, իսկ ապակատար համարվող բայահիմքը նորից շինծու է առանց օժանդակ բայի²:

Բոլորովին անհասկանալի է այսպես կոչված ժխտական ղերբայը, քանի որ կառողա դիմային ձև է, որի մեջ, սակայն, ոչ մի ժխտում չկա, իսկ փակագծերի մեջ գրվող օժանդակ բայի ժխտական ձևը նույնպես դիմագուրկ չէ: Սանավանդ չի հասկացվում, թե գրավոր խոսքում փակագծերում գրվող միակ ժխտում արտահայտող այս բառը բանավոր խոսքում ինչպե՞ս է պետք վերարտադրել:

Այսպիսով, բայի անդեն ձևեր են հորջորջվում այնպիսի բառածևեր, որոնք անդեն ձևով մեր լեզվում հանդես գալ չեն կարող, և անունն էլ դրվում է «ղերբայ» այն դեպքում, երբ նրանք բայ են ու կան, և իրենք հենց իրենց դերն էլ կատարում են:

* «Կանթեղ»-ի նախորդ /3/ համարում հրատարակված «Մեկ անգամ ևս բայասեռի կարգի մասին» հոդվածի հեղինակը Բագրատ Ներսիսյանն է (տպագրված է Ասատրյան): Հայցում ենք հեղինակի ներողամտությունը:

Անհասկանալի է, թե ի՞նչ է նշանակում «կախյալ դերբայ» արտահայտությունը, եթե տվյալ բառը ուրիշ կերպ հանդես գալ չի կարող. էլ ի՞նչ անդեմության մասին կարող է խոսք լինել:

Ասածից հետևում է, որ իրականում մենք ունենք անկատարի, ապակատարի, վաղակատարի՝ օժանդակ բայով եղանակաժամանակային ձևեր, այսինքն՝ դրանք կազմելու համար բայափիմքեր:

Ժխտականն էլ ոչ այլ ինչ է, եթե ոչ նույնպիսի բայափիմք, և դրանց տարբերությունը միայն կառուցվածքով է արտահայտվում: Հիշյալ բայափիմքերի կազմության ու գործառության վերաբերյալ չեն տարակարծությունները հայերենագիտության մեջ, այլ՝ այդ «համակարգի» մյուս անդամների: Այստեղ դրանց անդրադարձանք այնքանով, որքանով որ անհարիր ենք համարում միայն դիմային ձևերով հանդես եկող հարացույցի անդամների վերաբերյալ «դերբայ», այսինքն՝ անդեմ բայ տերմինի գործածությունը:

Ավելացնենք նաև Ռ. Իշխանյանի տեսակետը. «... ած և ող վերջամասնիկ ունեցող միավորները, իբրև բառային ինքնուրույն արժեք ունեցողներ, որակապես տարբեր են ում, ել, ու/ու/ վերջույթներ ունեցող միավորներից, որոնք դիմավոր բայերի հիմքեր են, բառային ինքնուրույնությունից զուրկ բաղադրիչներ»³:

Այժմ «անկախ դերբայների» մասին: Հայ քերականագիտության մեջ վերջիններիս վերաբերյալ մինչև օրս էլ տարակարծություններ կան, որոնք հիմնականում ելնում են երկու տրամագծորեն հակառակ ելակետային դրույթներից. մեկը դրանց դասակարգումն է ըստ խոսքիմասային պատկանելության հիմք ընդունելով գործառությունը /Ս. Աբեղյան, Հր. Աճառյան/, մյուսը ձևակազմական-ձևաբանականը, որը հիմք է ընդունում բայակազմական հատկանիշները: Ի՞նչ է նշանակում սա: Այն, որ, նախ անուրանալի է այս բառաձևերի ընդարձակ գործառությունը լեզվի մեջ որպես «դերբայական համակարգի» հետ անհարիր իրակություն, և երկրորդ՝ «այդ համակարգը» չի արտացոլում դրանցում արտահայտված բառիմաստի իրական պատկերը: Հակառակ դեպքում նման անհարիր իրավիճակ չէր ստեղծվի գործառության և քերականական բնութագրի միջև: Մյուս կողմից բառիմաստի ձևավորման և բայափիմքի կառուցվածքի միջև գոյություն ունեցող «անհամատեղելիությունն է» պատճառը և սրանց մեկնաբանությունների տարբերության հիմքը: Այլ կերպ ասած՝ այս վերջավորությունների ածանցական իմաստն է ստեղծված հակասության պատճառը:

Հիշյալ երկու սկզբունքները միաժամանակ կիրառելու փորձ կատարելով հանդերձ՝ այնուամենայնիվ բայակազմականին է տվել նախապատվու-

թյունը Գևորգ Ջահուկյանը՝ համարելով, որ նրանցում բային հատուկ քերականական կարգերի դրսևորումները /սեռ, կերպ, տիպար/ էական դեր են խաղում:

«Դերբայները բայի համակարգի մեջ մտցնելը չպետք է հիմք տար հրաժարվելու նրանց գործառական դասակարգումից», « ... դերբայների ներքին տարբերությունները անհրաժեշտաբար և օբյեկտիվորեն նաև հիմնական գործառական արժեքների տարբերություններ են», - գրում է Գ. Ջահուկյանը⁴: Այնուհետև ըստ ընթացականության ու չեզոքության հատկանիշների առանձնացնելով հանդերձ դերգոյական, դերածական, դերմակբայ, այնուամենայնիվ վերջում պահպանում է «դերբայ» տերմինը վերոհիշյալ պատճառով /սեռ, տիպար, կերպ/:

Ուշագրավ է Զովհ. Բարսեղյանի հետևյալ կարծիքը. «Անկախ դերբայների գործառական դասակարգումը, բացահայտելով այլ խոսքի մասերի և սրանց գործառությամբ հանդես եկող դերբայների ընդհանրությունները, վերահաստատում է գոյական դերբայ /անորոշ/, ածական դերբայ /հարակատար, ենթակայական, «ապակատար», ըստ ոճանց՝ նաև՝ ապառնի/, մակբայական դերբայ /«համընթացական»/ տերմինների և սրանց հասկացությունների գիտականությունը»⁵:

Այնուհետև՝ « ... լրացական հարաբերությունների մեջ /այստեղ հեղինակն է նկատի ունի որպես լրացում հանդես գալու շարահյուսական կիրառությունները - Բ. Ն./ գոյական, ածական, մակբայական դերբայները, իբրև լրացում բաշխվելով տարբեր խոսքի մասերի վրա, իբրև լրացյալ շարունակում են մնալ բայ: Սա այդ բայաձևերի խոսքիմասային-շարահյուսական բնութագրի բնորոշ կողմն է»⁵:

Ի՞նչ «բնորոշ կողմի» մասին է խոսքը. ինչպե՞ս կարող է միևնույն բառը և՛ տարբեր խոսքի մասերի մեջ մտնել, և՛ այնուամենայնիվ, բայ մնալ:

Վերջին հաշվով՝ «այս երկակիությունը» բացատրելու նպատակով Զովհ. Բարսեղյանը դիմում է Գ. Ջահուկյանի օգնությանը. « ... Գ. Ջահուկյանը անկախ գործածության դերբայների այս շարահյուսական առանձնահատկությունները կամ նրանց ոչ բայական գործածությունները մեկնաբանում է «որպես գործառական փոխակերպումներ»: Ըստ այդմ էլ հայերենի դերբայներ կազմող մասնիկները, որ մեկ անվանվում են վերջավորություն, մեկ ածանց, հեղինակի կողմից կոչվում են «գործառական ածանցներ», « ... այսինքն ածանցներ, որոնք կատարում են միայն գործառական փոխակերպում, բայց ոչ նոր իմաստի հավելում»⁵:

Այստեղից հետևում է, որ Զովհ. Բարսեղյանը «անկախ դերբայ» համարվող բառաձևերը փորձում է բաշխել գոյական, ածական, մակբայ խոսքի

մասերի մեջ, սակայն ամենավերջում, հետևելով Գ. Ջահուկյանին, գտնում է, որ դա փոխակերպման արդյունք է:

Անդրադառնալով Ա. Աբրահամյանի համրահայտ աշխատության հետևյալ հատվածին⁶: Նա բերում է վարադ, վառառած և վարարող գետ կապակցությունները, որտեղ «... ընդգծված բառերը հատկանիշի գաղափար են արտահայտում, որոշիչներ են գետ բառի համար, այսինքն ըստ կիրառության նույնն են:

... Իհարկե, այստեղ պետք է նկատի ունենալ լեզվական յուրահատկությունը և ոչ թե լոկ տրամաբանականը: Միանգամայն հասկանալի է, որ գետը իրականության մեջ չի կարող վարար լինել առանց համապատասխան եղելության. գետի այդ հատկանիշը հետևանք է որոշակի եղելության, վարարման եղելության: Այսպես է իրական դրությունը ըստ ամենապարզ տրամաբանության: Սակայն բանն այն է, որ վարադ բառը որպես լեզվական-քերականական որոշակի կարգի արտահայտիչ /որպես ածական/ չի արտահայտում այդ եղելությունը, որի հետևանքով առաջացել է գետի վարար լինելու հատկանիշը, այն ցույց է տալիս այդ հատկանիշը հարաբերականորեն կայուն դրությամբ՝ վառադ գետ:

Բերված օրինակներից պարզ կերպով երևում է, որ ընդհանուր առմամբ նույնպիսի հատկանիշ ցույց տվող և համանման կիրառություն ունեցող բառերը կամ բառաձևերը հատկանիշի դրսևորման բնույթի տեսակետից տարբեր են. մի կողմում հատկանիշը դրսևորվում է հարաբերականորեն կայուն /վարար/, մյուս կողմում՝ փոփոխական, շարժուն ձևով /վարարած, վարարող/, ուստի նրանք քերականորեն տարբեր են. վարադ ածական է, վառառած, վարարող բայ»⁶ (էջ 24):

Կարծում ենք՝ այստեղ կա և՛ հարցադրումը, և պատասխանը, քանի որ առարկայի հատկանիշի տրամաբանական և լեզվական-քերականական բնորոշումները համընկնում են, ուստի և պատասխանում են նույն տրամաբանական հարցին: Դա, բնականաբար, հնարավոր է միայն հասկացական նույն իմաստի դեպքում: Սա իր հերթին նշանակում է, որ գործ ունենք նույն խոսքի մասի համապատասխան նրբիմաստներով տարբեր դրսևորումների հետ, քանի որ մինևնույն հատկանիշի կայուն կամ փոփոխական լինելը չի կարող բառի խոսքիմասային պատկանելության սահմանման հիմք հանդիսանալ:

Ամենահետաքրքիրն այն է, որ Ա. Աբրահամյանը մի քիչ հետո բերում է այլ գուգահեռ, այս անգամ արդեն բայի և գոյականի, որը ոչ թե իր առաջ քաշած թեզն է հաստատում, այլ մեր. «Սակայն ժամանակակից հայերենում /և ուրիշ լեզուներում/ կան նաև այլ կարգի բառեր, որոնք նույնպես կարող են

պրոցեսի գաղափար արտահայտել, բայց որպես խոսքի մաս բայի ոլորտից դուրս են: Այստեղ խոսքը վերաբերում է որոշ կարգի գոյական անունների, որոնք հանդես են գալիս իբրև գործողության, եղելության, իրողության անվանում, որպես առարկայացած հասկացություն: Այսպես, օրինակ գալուստ, փախուստ, թնուում, շաշուում, հոսանք, վազք, եռեկենտրոն, խոստովանութուն, շարժում /Ն/, որոշում /Ն/, փտում /Ն/ բառերը արտահայտում են զանազան գործողությունների, եղելությունների գաղափար գալ, փախչել, թնալ, շաչել, հոսել, վազել, եռեկենել, խոստովանել, շարժել, որոշել, փտել բայերով արտահայտվող գործողությունների ու եղելությունների գաղափարը, սակայն նրանք ոչ թե բայեր են, այլ՝ գոյական անուններ:

... Ուրեմն, մինևույն գործողությունը կամ եղելությունն անվանող գոյական անունները և բայերը տարբեր են ընդհանուր իմաստի արտահայտման բնույթի տեսակետից: Այստեղից էլ բխում են քերականական յուրահատուկ կարգերը, որոնք ավելի ակնհայտ են դարձնում գոյականների ու բայերի տարբերությունները: Այսպես, անհնարին է շարժում գոյական անվան միջոցով արտահայտել այնպիսի իմաստ, ըստ որի համապատասխան կիրառությամբ ցույց տրվի շարժման գործողության անցումը կամ կրումը /կամ ինքնին կատարումը/, որպիսիք արտահայտվում են շարժել բայի միջոցով շարժել մի բան, շարժվել մեկի կողմից, մեկի ձեռքով, մեկի կամ մի բանի դղմամբ կամ ինքնին և այլն: Այս հնարավորությունը բայն ունի նրանով, որ նրա էությանը հատուկ է սեռի կարգը՝ իր համապատասխան առանձնահատկություններով: Շարժում բառի միջոցով չի կարելի դրանք արտահայտել, որովհետև գոյականն և մյուս խոսքի մասերին հատուկ չէ սեռի կարգը»⁶: / 25-26/

Անդի մասին քիչ հետո:

Իհարկե, հանրահայտ ճշմարտություն է, որ գոյականները ցույց են տալիս մեզ շրջապատող առարկայական աշխարհը մատերիան, իր բոլոր դրսևորումներով, և դրանք սուբստանցիոնալ արժեք ունեն, իսկ բայերը մատնանշում են դրանց շարժումը, տեղափոխությունը, փոփոխությունը տարածության ու ժամանակի մեջ: Այլ բան է, որ բառերը, որոնցով արտահայտվում են այդ հասկացությունները, կարող են ձևավորված լինել տարբեր արմատներով ու ածանցներով: Մի դեպքում մենք գործ ունենք այնպիսի բառերի հետ, որոնք հենց գոյականական կամ ածականական արմատներ ունեն, մյուս դեպքում այդ արմատները կարող են արտահայտված լինել «մաքուր» բայերով և բայա-հիմքերով /վազող և զնացող/, սակայն կարևորն այստեղ այն է, թե ավելացող հնչյունակապակցությունը բառահարաբերակա՞ն արժեք ունի, թե բառակազմական: «Դերբայների» դեպքում նախապատվությունը տրվում է բառի

ծախակողմյան բաղադրիչին առանց հաշվի առնելու աջակողմյան ձևույթի առաջացրած նոր իմաստը, այսինքն, այնուամենայնիվ, -ել, -ած, -ող, -իս -ը վերջավորություննե՞ր են, թե վերջածանցնե՞ր:

Վերջավորությունների և վերջածանցների արտահայտած իմաստների միջև եական տարբերություն կա:

Բառերի հասկացական իմաստը, իհարկե, ամենակարևորն է, սակայն պակաս կարևոր չեն վերջավորությունների արտահայտած քերականական իմաստները, քանի որ դրանք առարկաների ու երևույթների միջև գոյություն ունեցող կապերն ու փոխհարաբերություններն են վեր հանում, որ, վերջին հաշվով, խոսողի վերացարկված դատողության, տրամաբանության արգասիքն է: Ինչպես որ առանց հասկացության չկա դատողություն, այնպես էլ առանց վերջավորությունների չի կարող լինել առարկաների ու երևույթների փոխհարծ կապի վերհանում: Ինչպես որ հասկացությունն է ենթադրում առարկաների եական հատկանիշների վերացարկված արտացոլում մեր գիտակցության մեջ, այնպես էլ վերջավորությունների քերականական իմաստներն են ենթադրում վերացարկում դրանց միջև եղած հարաբերությունները բացահայտելու նպատակով, որը և հենց դատողություն է, եզրակացություն, մտահանգում, գիտելիք, աշխարհընկալում, աշխարհի ճանաչողություն:

Մյուս կողմից՝ հասկացությունն ընկալվում է ոչ միայն որպես առանձին, մեկուսացած բառ, այլև՝ որպես ամբողջական դատողության տարր, բաղկացուցիչ մաս: Ուստի և տվյալ հասկացության՝ որպես գործողության թե առարկայի այլ հատկանիշի ընկալումը պետք է դիտարկել ոչ միայն որպես տարրալուծվող երևույթ, այլ նաև՝ դատողության մեջ որպես այդպիսին ըմբռնվող, որի դեպքում արդեն կարևոր է դառնում նրա վերջնական իմաստը և ոչ թե նախնական, բայափիմքային բնույթը. գուցե այստեղ միակ զանազանությունը գործընթացայնության /պրոցեսայնության/ հատկանիշն է /վազ-ել – վազ-ող – վազ-ած – վազ-ել-իս/, որով –ել, -ած, -ող, -իս ունեցողները /ինչպես նաև, ասենք, -ուստ, -ք, -անք, ունեցողները/ տարբերվում են դրանք չունեցողներից, և այս դեպքում այդ գործընթացի հետ այս կամ այն կերպ առնչությունն է առաջին պլան մղվում և ոչ թե ինքը գործընթացը, որի դեպքում բայափիմքը դիմավոր ձևերի համար նոր հիմք կազմելու հնարավորություն է ստեղծում /վազ-ում են, վազ-ել են, վազ-ելու են/:

Երբ բայի քերականական կարգերը վերագրվում են նրան թեքված համակարգում, մի բան է, իսկ երբ այդ նույն կարգերը փորձում են վերագրել նրան թեքման համակարգից դուրս առանց հաշվի առնելու, որ արդեն գործ ունեն նոր բառի հետ, դա արդեն բոլորովին ուրիշ բան է: Այսինքն արվում է մի

գործողություն, որտեղ հաշվի չի առնվում, որ արդեն գործ ունեն ուրիշ բառի հետ: Սա է պատճառը, որ շեշտը դնելով բայական հիմքի վրա, առանց հաշվի առնելու վերջածանցի շնորհիվ ստացված նոր՝ բառիմաստը՝ բային հատուկ քերականական հատկանիշները փորձում են գտնել ոչ - բայի մեջ: Այդ քերականական կարգերն են համարվում բայիմաստը, սեռը, կերպը, խնդրառությունը:

Ասենք, որ բայիմաստը քերականական կարգ չէ, պարզապես բայիմաստով է դրսևորվում բայասեռը, որը, սակայն, ինչպես մենք փորձել ենք համոզել⁷, շարահյուսաբառագիտական կամ շարահյուսաբառակազմական կարգ է, քանի որ անցողականություն-անանցողականություն հակադրության մեջ է դրսևորվում, որը շարահյուսություն է, և համապատասխան բայածանցներով, անածանց բայերը բայասեռի ձևությ չունեն:

Ստացվում է, որ «դերբայ» տերմինի տակ պետք է հասկանալ և բայ, և գոյական, և ածական, և մակբայ: Այստեղից է գալիս, ինչպես նկատում է Գ. Ջահուկյանը, այս տերմինի անթարգմանելիությունը: Օրինակ, եթե փորձենք գտնել դրանց համարժեքը, ասենք, ռուսերենում, ապա մի դեպքում պիտի գուգադրենք *причастие*-ի հետ, մյուս դեպքում՝ *деепричастие*-ի հետ, երրորդ դեպքում մի այլ բանի հետ և այլն ...

Այլ կերպ ասած՝ նման դեպքում պարզապես անհնար կդառնա գուգադրական-տիպաբանական վերլուծությունը, քանի որ գործ կունենանք լեզվական տարբեր երևույթների հետ:

Ասածից պարզ երևում է, որ «անկախ դերբայներ» համարվող բառածների խոսքիմասային պատկանելության խնդրում խոչընդոտ են հանդիսանում դրանց բայական հատկանիշները:

Այդպիսիք են համարվում բայիմաստը, սեռը և խնդրառությունը: Նախ՝ բայիմաստի մասին: Սեռը և խնդրառությունը բայիմաստից բխող քերականական հատկանիշներ են, և դրանց իրացումները տեղի են ունենում շարահյուսական մակարդակում: Իսկ սա իր հերթին նշանակում է, թե հիշյալ սկզբունքը կարող է ելակետային լինել գործառական իրացումների տարրորոշման համար, վերջիններիս հիման վրա էլ խոսքիմասային դասակարգման չափանիշ կարող է հանդիսանալ: Վերջին հաշվով՝ որևէ խոսքի մասի դասակարգում ապրիորի տեղի ունենալ չի կարող. բազմահատկանիշ դասակարգման մյուս չափանիշները ածանցյալ են:

Բայասեռի քերականական կարգը ավելի լայն հասկացություն է, քան խնդրառությունը: Ինչպես Գ. Ջահուկյանն է ասում՝ «Անցողականություն - անանցողականություն կարգի փոխարեն /որ հենց բայասեռի քերականական

կարգն է - Բ. Ն./ իբրև տարբերակիչ հատկանիշ լայն առումով խնդրառությունն ընդունելը ճիշտ չէ, որովհետև անցողականության հետ չկապված խնդրառության շատ դրսևորումներ հատուկ են նաև բայածանց գոյականներին /հմտ. զգուշացնել Զակոբին - զգուշացում Զակոբին/ և բազմաթիվ ածականների /պատից կախ, հոգսերից զերծ, գինով լի, սիրով լեցուն, մարդուն հատուկ և այլն/»⁴: /էջ 50/

Ուրեմն, իրոք, խնդրառությունը չի կարող բառի խոսքիմասային պատկանելության ելակետ լինել, քանի որ այն հատուկ է նաև այլ խոսքի մասերի:

Բայասեռի կարգը նույնպես չի կարող բառի խոսքիմասային պատկանելության տարբերակման հիմք հանդիսանալ այն պարզ պատճառով, որ այն դրսևորվում է անցողականություն - անանցողականություն հակադրության մեջ, իսկ վերջինիս իրացումը անհնար է մեկ բառի սահմաններում, քանի որ այն ենթադրում է գործողության և օբյեկտի շարահյուսական փոխհարաբերություն:

Վ բայածանցով կազմությունների մասին կարելի է ասել հետևյալը. նախ հաճախ վ-ով և առանց դրա կազմությունների իմաստային չեզոքացում է նկատվում հատկապես -ած վերջածանցով կազմություններում. պոկած – պոկված և այլն: Բացի այդ վ-ն նույն բառակազմական արժեքն ունի, ինչ որ մյուս բայածանցները՝ պատճառական, բազմապատկական, այսինքն այդ ածանցներով կազմություններում գործ ունենք այլ բայերի հետ՝ նոր բառիմաստով:

«Ղերբայները» բայի համակարգի մեջ մտցնելու հաջորդ էական չափանիշը, ըստ Գ. Ջահուկյանի, ընթացականության, այսինքն բուն բայիմաստի դրսևորման հատկանիշն է՝ հարաբերված կերպի կարգին: Դետաքորբական է, որ համընթացական, նախընթացական, ապընթացական և չեզոք հատկանիշներով բնորոշվում են այս ղեպընում արդեն «ղերբայական վերջավորությունների» արտահայտած իմաստները, որոնք հենց ինքը՝ Գ. Ջահուկյանը, համարում է գործառական ածանցներ և արդյունքում, որպես դրանց իրացում գործառական դրսևորում, նշում է դերգոյական, դերածական, դերմակբայ⁴: /էջ 52 /

Այս առումով «դերգոյական», «դերածական», «դերմակբայ» տերմիններն անհասկանալի են, ինչպե՞ս ընկալել. գոյականի, ածականի, մակբայի դեր կատարող դերբայ, թե՞ դերբայի դեր կատարող գոյական, ածական, մակբայ: Մանավանդ դեռ-ը հայերենագիտության մեջ «դերանուն» տերմինի օրինակով առաջին հերթին հասկացվում է դեր կատարող և ոչ թե դերբայ: Գուցե՞ դերբայ-գոյական, դերբայ-ածական, դերբայ-մակբայ: Իսկ եթե

վերջինս է ճիշտ, այդ դեպքում գուցե ավելի նպատակահարմար են բայանուն, բայածական և բայահիմքով մակբայ տերմինները, որտեղ ավելի հստակ կլինի տվյալ խոսքի մասերի բնութագիրը:

Վերջին տերմինների պատճառաբանվածությունը կարելի է մեկնաբանել այսպես: Սովորական գոյականներից, ածականներից ու մակբայներից դրանք կտարբերվեն նրանով, որ կմատնանշվի նրանց՝ բայահիմքից առաջացած լինելը: Այդ համագամանքի շնորհիվ բայանունները, բայածականները և բայահիմքով մակբայները պարզապես կտարբերվեն բուն գոյական, ածական անուններից ու մակբայներից: Այս դեպքում պատճառաբանված կլինի նաև «գործառական ածանց» հասկացությունը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ -ել, -ող, -ած, -իլ ածանցների իսկական անվանումը. ածանցներ, որոնք ըստ գործառության և ըստ խոսքիմասային պատկանելության կերտում են բայանուններ, ածականներ և բայահիմք ունեցող մակբայներ:

Գ. Ջահուկյանը նկատում է. «Մանուկ Աբեղյանը ճիշտ էր, երբ նշում էր «ղերբայների» գործառական տարբերությունների կարևորությունը, և ճիշտ չէր, երբ այդ տարբերակումը դարձնում էր բացարձակ»⁴: /էջ 48 /

Այստեղ շարադրված մոտեցման դեպքում, թվում է, վերանում է այդ բացարձակացումը, քանի որ հաշվի են առնվում նաև բայիմաստի ու նրա հետ կապված հատկանիշները: Մյուս կողմից վերանում է անորոշ, հարակատար, ենթակայական և համընթացական տերմինների առաջացրած խառնաշփոթը, որ տեղի էր ունենում ելակետային ամմիօրինականության և երևույթը սպառնիչ չբնութագրելու պատճառով:

Այսպիսով, մեր առաջարկն է տարբերակել խոնարհման հարացույցում գործող բայահիմքերը /-ում, -ելու/ալու, -ել/-ացել, -գրո/ այլ խոսքի մասերի կազմի մեջ մտնող բայանունից, բայածականից ու բայահիմքով կազմված մակբայից:

¹ Ս. Աբրահամյան, ժամանակակից հայերենի ղերբայների և ժամանակների մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, 1969 թ. N10

² Ս. Սարգսյան, Ապակատար և անորոշ սեռական-տրական ղերբայների շարահյուսական գործառույթները արևելահայ և արևմտահայ գրական տարբերակներում, Բանբեր Երևանի համալսարանի, N 3, էջ 186-190:

³ Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1971 թ., էջ 80:

⁴ Գ. Ջահուկյան, ժամանակակից հայերենի անդեն բայերը («ղերբայները»), «Բանբեր Երևանի համալսարանի», հ. 3, 1975թ., էջ 48:

⁵ Յ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., 1980թ., էջ 489:

⁶ Ս. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962:

⁷ Բ. Ներսիսյան, «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2005թ. հ. 3(24), էջ 68-76: